

Իս էնու մօտէն ինչ կը խասկանամ :

250. Էն մէկ օր կըլնը, մէկ տարուան գինին կը տանի.

Գինին էլ քիչ կը տանի :

Կերթայ յետոյն կը նստի.

Էլն անիւշ-անիւշ բաներ կը տանի, գնը Գաւթը յառէջ.

Գինին էլ կը գնի յետջիւ Գաւթըն.

Գաւթը զիւր խաց կուտի, զիւր գինին կը խմի.

Գաւթը գլեօխ չը բռնի գինին. Գաւթ չը քնի :

251. Կնիկ կը նստի Գաւթը գիւք.

Ձեռ կը թլի, Գաւթը վիզ բերի գրկի :

Կէնի վուր Գաւթը իրիս բերի պագնի :

Ձէ վուր նստաւ Գաւթը գեօք, Գաւթը ընտե ըռըկաւ,

չը թուղից զիրիս պագներ էր :

252 Էսաց. — Դիւ իմ մօր տեղն իս :

Իլի, նստը էնա տեղ, իս զիւ զըռցինք :

Էսաց. — Գաւթ. վրէ՞, իս քիւ մօր տեղն իմ,

Իս ուտար աղջիկ իմ.

Ֆարագա իկի, քիւ խրեօխպէր առիւր իմ. Գաւթ, քե՞ ինչ :

— Ո՛ր գիւ ուտար աղջիկ իս, վրէ՞ իկիւր իս սդա :

— Իս քիւ խրեօխպէր Յեօվանի կնիկն իմ :

— Է՛, իմ մէր, խրեօխպօր կնիկ մէ՛կ է. էն էլ իմ մէրն է.

ինչ ֆարդ¹ կայ էն տե :

— Գաւթ, գիւ չըս գտի. իս ուտար աղջիկ իմ.

Էսքամ ժամանակ քիւ խրեօխպէր ձեռքի յառէջն էր.

Մկայ քիւ խրեօխպէր չըմ ուղի, զքի կուղիմ :

253. Գաւթ կը մ՛նայ մտածիլեով.

— Իս մկայ ըլլմ զանիմ, սպանիմ, իմ խրեօխպէր գեան-

դատ տ՛անի՝ թէ. — Ձիմ կնիկ սպանից Գաւթ :

Թէ չսպանիմ, էդա կնիկ ձընէ չը դադարի :

Իմ խրեօխպօր կնիկ, կըսի Գաւթ, ըլի, գնա, իս քնիմ.

Ձիւր վաղ, վաղ իս քի բան կըսիմ :

Խաիից, դրից ճամբխու :

254. Առաւուտուն շիւտ Գաւթ կըլնը կերթայ վար

յաղբրին. կը լուացուր, կը նստի էն տե, հա տուշունմիշ² կըլնը :

Տեսաւ էն պառաւ, դէ հա, էն տե իրեաց :

Կանչից. — Է՛, պառա՛ւ, էրի՛ էս տե, էրի՛ էս տե :

Ձեռնով էրաւ, պառաւ ըլաւ, էկաւ էն տեղ :

255. Ըլաւ, Յեօվանի կնիկ ինչ էրեր էր, յըմեն պառուիւն

էսաց :

1 Թրք. — Տարբերութիւն : 2. Թրք. — Մտածելու խորհել :